մարը բացվեց Ֆրանսիայի Հայոց թեմի առաջնորդի ողջույնի խոսքով եւ Ամենայն Հայոց Հայրապետի պատգամով: Զեկույցներ ընթերցվեցին «Հայ Եկեղեցու դերը Սփյուռքում», «Հայ Առաքելական Եկեղեցի. արդիականության եւ ավանդության միջեւ», «Հայ Առաքելական Եկեղեցու երիտասարդաց շարժումը Եւրոպայում» թեմաներով: Համագումարի նիստի վերջում Նորին Սրբությունը պատասխանեց մասնակիցների հարցերին:

Նույն օրը Հայոց Հայրապետը հանդիպում ունեցավ Բուշ դյու Ռոն նահանգի սենատոր Ժան Նոել Գերինիի, Պրովանս-Ալպ-Կոտ դ'Ազյուրի շրջանային խորհրդի նախագահ Միշել Վոգելի հետ, այնուհետեւ այցելեց Մարսելի Համազգային դպրոց, հանդիպում ունեցավ աշակերտության եւ ուսուցչական կազմի հետ: Երեկոյան Մարսելի Աբբայե Սեն Վիկտոր եկեղեցում Նորին Սրբությունը մասնակցեց համայնքի կազմակերպած համերգին: Ելույթ ունեցան «Գեղամ Բաղդասարյան» եւ «Սասուն» ժողովրդական գործիքային համույթները, ինչպես եւ Մարսելի «Սահակ-Մեսրոպ» երգչախումբը: Օրվա բոլոր միջոցառումներին իր մասնակցությունը բերեց նաեւ ՀՀ դեսպան տիար Վիգեն Չիթեչյանը:

Հունիսի 30-ին Մարսելում շարունակվեց Հայ Եկեղեցու եւրոպական համագումարը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մարսելի Սրբոց Թարգմանչաց եկեղեցու սրահում հարցազրույց տվեց ֆրանսիական France 2 հեռուստաընկերությանը՝ ներկայացնելով Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու առաքելությունը, հայոց հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեությունը, անդրադարձավ Սփյուռքում Հայ Եկեղեցու ծառայությանը եւ պատասխանեց հեռուստատեսության լրագրողի հարցերին:

Կեսօրից հետո Նորին Սրբությունը հանդիպում ունեցավ Մարսելի քաղաքապետ Ժան Կլոդ Գոդանի հետ: Նույն օրը՝ երեկոյան, տեղի ունեցավ Վեհափառ Հայրապետի այցի առիթով մարսելահայ համայնքի կազմակերպած պաշտոնական ընթրիքը, որին մասնակցում էին ՀՀ դեսպան տիար Վիգեն Չիթեչյանը, Մարսելում ՀՀ հյուպատոս տիար Վարդան Սրմաքեշը, Եւրոպայի հայոց թեմերի առաջնորդները, հոգեւորականները, Հայ Եկեղեցու եւրոպական համագումարին մասնակից պատվիրակությունների անդամները, հարավային Ֆրանսիայի շրջանի ծխական քահանաներ, Մարսելի հայ համայնքի վարչականներ եւ հավատացյալներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌԴ ԴԱՇՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հուլիսի 11-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնության Դաշնային Ժողովի Դաշնության խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոյի գլխավորած պատվիրակությունը՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԺ փոխնախագահ Հերմինե Նաղդալյանի:

Վ. Մատվիենկոն Մայր Աթոռում

Հայրապետական օրհնություն

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց հայ եւ ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությանը, ինչպես նաեւ եղբայրական հարաբերություններին համահունչ Հայաստանի եւ Ռուսաստանի ռազմավարական գործընկերությանը: Մասնավորապես ընդգծվեց, որ նման փոխադարձ այցելությունները գալիս են ավելի սերտացնելու եւ առավել խթանելու համագործակցությունը տարբեր ոլորտներում:

Իր խոսքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնավոր անդրադարձ կատարեց օրեր առաջ ՌԴ Կրասնոդարի շրջանում տեղի ունեցած աղետին՝ ի դեմս տիկ. Մատվիենկոյի իր ցավակցությունն ու սրտակցությունը հայտնելով ՌԴ իշխանություններին եւ ժողովրդին՝ ջրհեղեղի հետեւանքով զոհված հարյուրավոր քաղաքացիների համար:

Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը եւ ՌԴ Դաշնային Ժողովի Դաշնության խորհրդի նախագահը խոսեցին նաեւ Լ.Ղ. հակամարտության խաղաղ կարգավորման, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցու ջերմ հարաբերությունների ու արդյունավետ համագործակցության, Ռուսաստանում հայ համայնքի ազգային-հոգեւոր կյանքի կազմակերպման մասին: Այս առիթով Նորին Սրբությունն իր օրհնությունը եւ գնահատանքը հայտնեց ՌԴ իշխանություններին Ռուսաստանում հայորդիներին եւ Հայ Եկեղեցուն ցուցաբերվող զորակցության եւ ուշադրության, ինչպես նաեւ Լ.Ղ. հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված ջանքերի համար:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը տիկ. Վալենտինա Մատվիենկոյին շնորհեց Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» պատվո բարձր շքանշան՝ հայ եւ ռուս ժողովուրդների բարեկամության ամրապնդման, Սանկտ Պետերբուրգի հայկական հոգեւոր եւ ազգային արժեքների պահպանման գործում ունեցած կարեւոր ներդրման համար:

Վերջում Նորին Սրբությունը մաղթեց, որ Բարձրյալի Աջը միշտ հովանի լինի երկու երկրներին եւ Ասծու օրհնությամբ անխախտ մնա երկու ժողովուրդների եղբայրությունը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՒ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆԻՆ

Հուլիսի 19-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Արգենտինայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Դիեգո Էրնեստո Ալվարես Ռիվերային:

Հանդիպմանը Նորին Սրբությունը շնորհավորեց դեսպանին նշանակման առիթով՝ մաղթելով արդյունավետ առաքելություն Հայաստանում, ապա անդրադարձ կատարեց երկու երկրների միջեւ առկա համագործակցությանը: Վեհափառ Հայրապետն ուրա-